ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՇՔԸ

Օքսֆորդի բառարանը սահմանում է «Ժամանակը» որպես «գոյության անժամկետ շարունակական առաջընթաց»: Բայց հունարենում ժամանակի երկու բառ կա՝ «Քրոնոս Chronos» և «Կայրոս Kairos»:

Քրոնոսը ճշգրիտ ժամանակի չափումն է: Այս հունարեն բառի համատեքստը Աստվածաշնչում օգտագործվում է 53 օրինակով:

Կայրոսը սահմանվում է որպես ճիշտ ժամանակ կամ հարմար ժամանակ: Այս բառի ենթատեքստը Աստվածաշնչում օգտագործվում է 87 օրինակով:

Օրինակ. *Ժամը քանիսն է? Chronos-ի ժամանակով կարող է ժամը 3:00-ն լինել, բայց Kairos-ի ժամանակով կարող է կատարյալ պահ լինել ընկերոջդ զանգահարելու համար:*

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ԳԱՂ. 4:4-6

Գաղ. 4:4-6 - 4 Իսկ երբ ժամանակը (Chronos) իր լրումին հասավ, Աստուած ուղարկեց իր Որդուն, որը ծնվեց կնոջից եւ մտավ օրէնքի տակ՝ 5 փրկելու համար նրանց, որ օրէնքի տակ էին, որպէսզի մենք որդեգրություն ընդունենք: 6 Եւ որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած մեր սրտերի մէջ ուղարկեց իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ Աբբա, Հայր:

Հռ. 5:6 Որովհետև երբ մենք դեռ տկար էինք, Քրիստոսը որոշված ժամանակին (Kairos) մեռավ ամբարիշտների համար:

I. ՆԱ ԵԿԱՎ ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ:

Եփ. 1:9-10 - 9 Ճանաչեցրեց մեզ, ինչպէս հաճելի էր իրեն, իր կամքի խորհուրդները. նա դրանք նախապէս սահմանած էր Նրանով, 10 որպէսզի, ժամանակների (Kairos) լրումին, ինչ որ երկնքում է եւ ինչ որ երկրի վրա, ամէն ինչ Քրիստոսով բովանդակուի:

Գործք.1:7 – Եվ Հիսուսն ասաց նրանց. Ձեր գործը չէ ժամերն (Chronos) ու ժամանակներն (Kairos) իմանալը, որ Հայրն իր իշխանությամբ սահմանեց:

> *Դանիել 9:25-26 – 25 Եվ իմացի՛ր ու հասկացի՛ր, որ Երուսաղեմը վերակառուցելու վճիռն արձակելուց մինչև Մեսիայի՝ Առաջնորդի գալը յոթ յոթնյակ (49 տարի) և վաթսուներկու յոթնյակ կա (434 տարի). հրապարակը և պարիսպը պիտի վերակառուցվեն, սակայն տագնապալից ժամանակներում: 27 Եվ վաթսուներկու յոթնյակից հետո Մեսիան պիտի վերացվի, և ոչինչ չպիտի ունենա: Գալիք իշխանի ժողովուրդը պիտի կործանի քաղաքը և սրբարանը. նրա վերջը հեղեղով կլինի, և մինչև պատերազմի ավարտը ավերումներ են որոշված:*

Ղուկաս 2:1-7 – 1 Այն օրերին Օգոստոս կայսրից հրաման արձակվեց, որ ամբողջ երկրում մարդահամար անցկացվի: 2 Այս առաջին մարդահամարը եղավ Ասորիքի կուսակալ Կյուրենիոսի ժամանակ: 3 Եվ բոլորը գնում էին արձանագրվելու՝ ամեն մեկն իր քաղաքը: 4 Հովսեփն էլ Գալիլեայից՝ Նազարեթ քաղաքից, գնաց Հուդա՝ Դավթի քաղաքը, որ Բեթլեհեմ է կոչվում. որովհետև նա Դավթի տնից ու սերնդից էր. 5 որպեսզի այնտեղ արձանագրվեր իր նշանածի՝ Մարիամի հետ, որ հղի էր: 6 Երբ նրանք այնտեղ էին, նրա ծննդաբերելու օրերը լրացան: 7 Եվ ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց, դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանատանը նրանց համար տեղ չկար:

Երուսաղեմում հրեշտակն ասաց Զաքարիային, որ ինքը և Եղիսաբեթը երեխա են ունենալու՝ Հովհաննես Մկրտչին: Ղուկաս 1:5-25

Նազարեթում հրեշտակն ասաց Մարիամին, "Ահա կհղիանաս, որդի կծնես և նրա անունը Հիսուս կդնես"... Ղուկաս 1.26-38

Մարիամը գնաց Հրեաստան այցելելու իր զարմիկ Եղիզաբեթին: "Երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, երեխան նրա որովայնում խաղաց, և Եղիսաբեթը Սուրբ Հոգով լցվեց:" Ղուկաս 1:41

Նազարեթում Գաբրիել հրեշտակն ասաց Հովսեփին, որ վերցնի Մարիամին որպես իր կին, քանի որ նրա մեջ ծնունդ առածը Սուրբ Հոգուց է: Մատ. 1:18-25

Հիսուսը ծնվեց Հրեաստանի Բեթլեհեմ քաղաքում: Ղուկաս 2:1-21

Մոգերը արևելքից այցելեցին Հիսուսին և բերեցին Նրան ոսկի, խունկ և զմուռս: Մատ. 2:1-12

Աստված զգուշացրեց մոգերին չվերադառնալ Հերովդեսի մոտ՝ պատմելու նրան, թե որտեղ է ծնվել Հրեաների թագավորը: Մատ. 2:12

Հրեշտակը երազում հայտնվեց Հովսեփին և ասաց, որ վերցնի Հիսուսին և Մարիամին և փախչի Եգիպտոս, որպեսզի Հերովդեսը չկարողանա սպանել Նրան: Մատթեոս 2.13-14

Հերովդեսի մահից հետո հրեշտակը երազում հայտնվեց Հովսեփին և ասաց, որ վերադառնան Իսրայել: Մատթեոս 2.19-21

Հովսեփին երազում Աստված զգուշացրեց չգնալ Հրեաստան, ուստի նրանք գնացին Գալիլեայի Նազարեթ: Մատթեոս 2.22-23

II. ՆԱ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ:

Սաղ. 145:15 - 15 Ամենի աչքերը քեզ են սպասում, եւ դու տալիս ես նորանց կերակուրը իրանց ժամանակին:

- ***Ի՞նչպես է Աստված ապահովում մեր կարիքները:***

  2 Օր. 11:14 - 14 Այն ժամանակ ձեր երկրի անձրևը իր ժամանակին կտամ՝ առաջին եւ վերջին անձրևը, եւ կժողովես քո ցորենը, քո գինին ու քո յուղը:

  Գաղ. 6:9 - 9 Եւ չձանձրանաք բարին գործելուց, որովհետեւ իր ժամանակին (Kairos) կինձենք՝ եթէ չթուլանանք:

- *Դժվար ժամանակները կարող են մեզ թուլություն և ձանձրություն պատճառել:*

- *Աստված ստեղծել է մարդուն հավիտենության համար, ժամանակից դուրս:*

III. ՆԱ ԱՍՈՒՄ Է, ՈՐ ՀԵՆՑ ՀԻՄԱ Է ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԸ:

2 Կոր. 6:2 - 2 Որովհետեւ ասում է. Ընդունելի ժամանակում (Kairos) լսեցի քեզ, եւ փրկութեան օրում օգնեցի քեզ. ահա հիմա է ընդունելի ժամանակը (Kairos). ահա հիմա է փրկութեան օր:

Ծնն. 18:14 - 14 Եհովայի համար դժուար բան կա՞յ արդեօք. այս ժամանակ եկող տարին դարձեալ քեզ մօտ կգամ, եւ Սարրան մի որդի կունենայ:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: